

Ռուսմանիոյ մէջ ալ մեր օրերուն՝ հայերն են որ սկիզբ ու զարկ կու տան գորգաշինութեան: Թրքական սարսափներէն մազապուրծ Հայ կիներ հոն կը շինէին ամէնուն զմայլանքը խոյ Պուխարաներ: 1923ին «Պոլսէն հոս (Պուտարեշտ, Հունդարիա) զազթող հայ գորգազէտ մը Պոլսեցի հայ վաճառականի մը հետ միանալով հիմնած է գորգաշինութեան մեծ արհեստանոց մը 100 թեղկեահէ պատրաստուած»⁽³⁾: 1931ին Եւրոպա կատարած իմ մէկ ճամբորդութեանս ընթացքին Պուտարեշտի մէջ տեսայ գորգի երեք զեղեցիկ վաճառատուներ, եւ գոհունակութեամբ անոնց ցուցատախտակներուն վրայ կարգացի հայ տէրերու անունները:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Ըստ Dr. F. R. Martinի՝ «Mr. Anders Zorn կ'ըսէ, որ Մոռայի, Շուէտի հիւսիսային կողմը, Հայաստանի ԺԳ դարու կապերտներուն հետ ունեցած զոյներու նմանութիւնը անկարելի չեն ըներ սա հաւանականութիւնը՝ թէ Աքանտինաւեանները իրենց զոյներու խմբաւորումի զազափարը այդ (հայ) աղբիւրներէն առած ըլլան: Ասոր պատճառը սա է որ Շուէտացիք Կ. Պոլիս եւ Մերձաւոր Արեւելք եղած են իբր զինուորներ: Նորվեկեան թագաւորներու պատմութիւնը կը պարունակէ Harald Haerdraadeի պատմութիւնը, որ 1035-1037ին կը մասնակցէր Սիւրբիոյ եւ Հայաստանի պատերազմին, նախ քան Յունաց հետ Կիլիկիա երթալը, 1038ին»⁽⁴⁾:

Բնական է որ ասիկէ զատ Հայերը իբր վաճառական յարաբերութիւններ ունեցած են Աքանտինաւեան հոգամասին հետ: Ծանօթ է որ Հոլանտայի եւ Ֆլամանիոյ (Պելճիքա) Ամսդերտամ եւ Պրիւժ քաղաքներուն մէջ շատ կանուխէն գորգի հայ վաճառականներ կային: Ըստ Հ. Ալիշանի՝ «ի վերջ կոյս ԺԳ դարու (իբր յամի 1390) շնորհեցաւ արտօնութիւն Հայոց եւ Թրքաց ի Պրիւժ՝ վաճառել զկապերտս իւրեանց առաջի գրան Ս. Դոնատ եկեղեցւոյ. (որպէս յետոյ եւ ի հրապարակի Ս. Մարկոսի ի Վենետիկ՝ հանդէպ դրանց հրաշակերտ տաճարին)»⁽⁵⁾: Ասիկա անտարակոյս վկայութիւն մըն է որ ցոյց կու տայ հայերուն գորգ ծախելը Պրիւժի մէջ 1390ին, թէեւ հայ վաճա-

(3) «Բաղմալէպ», 1924, էջ 185:

(4) A History of Oriental Rugs before 1800. London, 1908, p. 143.

(5) Սիւսիան, էջ 461: Ասիկէ օգտուած է Սարուխան, Հոլանտան եւ Հայերը, «Հանդ. Ամս.», 1926, էջ 570: Տես նաև իր Բելլիա եւ Հայերը, «Հանդ. Ամս.», 1935, էջ 72, կը գործածէ օտար աղբիւրներ ալ այս մասին, անդ էջ 75: Իբր նորութիւն աւելցնեմ որ Հայերը ի միջի այլոց Հոլանտայի տուած են ստիսածագիկ: «Երեք դար առաջ Հոլանտացիք սկսան արտադրել եւ կատարելագործել փոքրիկ ստիսածեւ հունտեր Tulipa կոչուած ծաղիկին, զորս իրենց վաճառականները բերած էին Պարսկաստանէն եւ Հայաստանէն». (Henrick William Van Loon. — Geography, 1932, New York, p. 215).